



1886

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՂԴՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
Հիմնադիր՝ Ներսէս Պատրիարք Վարժապետեան

07 Դեկտեմբեր, 2009

Ազնուափայլ Տիկին Հրանոյշ Յակոբեան,
Հ Հ Սփիւռքի Նախարար

Պատին ունեցայ ստանալու Ձեր 03/17/1604-09 համար եւ 07/10/2009 թուակիր նամակը ու կցեալ յուշամետալը, որը շնորհուէր է անձիս Հայաստանի Հանրապետութեան վարչապետ մեծարգոյ Տիգրան Մարգսեանի կողմէ Ուսուցչաց Օրուայ առթիւ:

Սփիւռքահայ սերունդներու հայեցի դաստիարակութեան ուղղեալ Ձեր ցուցաբերած հետաքրքրութիւնը մեծապէս կը քաջալերէ մեզ, սփիւռքեան գոյատեւման նոյնիսկ մեր ամենադժուարին պայմաններուն:

Պարգևատրութիւնը ընկալելով որպէս յաւելեալ պատասխանատուութիւն, հետայսու եւս իմ ծառայութեանս պիտի շարունակեմ միշտ առաջնահերթ նկատելով՝ Պոլսահայ սերունդներու հայ ինքնութեան, ազգային լեզուամտածողութեան պահպանման, հայեցի կրթութեան եւ դաստիարակութեան գործը:

Խորին շնորհակալութիւն Ձեզ ու Ձեր անձնակազմին այս նրբիմաստ տուուչութեան առթիւ:

Միտով եւ յարգանքով՝

Միլվա Գոյումաճեան

Տնօրէն՝ Ազգային Կեդրոնական Վարժարանի

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՂԴՈՆԱԿԱՆ ՎԱՐՇԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Մարտի 03, 2010 թ.
Մտից թիվ 237-10